Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 21 հունիսի 2024թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ բաժնետերերի տարեկան ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն բանկի Խորհրդի թիվ 12/10-07.05.24թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև ս.թ. մայիսի 31-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 77-ի պահանջների, հաշվի են առնվել մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը ստացված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 11,139,584 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 8,691,653 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 78.02%-ը:

Քվորումն ապահովված է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի Վարչության հաշվետվությունը 2023թ. տարեկան գործունեության մասին:
3. Բանկի 2023թ. տարեկան արդյունքներով շահաբաժիններ վճարելու մասին:
4. Բանկի 2023թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի բաշխման համամասնությունների մասին:
5. Բանկի աուդիտն իրականացնող անձի հաստատման մասին:
6. Բանկի Խորհրդի ընտրության մասին:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցի, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Առաջին հարց	կողմ	8,691,653 ձայն կամ մասնակիցների ձայների	100.0%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
2. Երկրորդ հարց	կողմ	8,691,653 ձայն կամ մասնակիցների ձայների	100.0%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%

3. Երրորդ հարց կողմ 8,691,653 ձայն կամ մասնակիցների ձայների 100.0%
դեմ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
ձեռնպահ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
անվավեր 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

4. Չորրորդ հարց կողմ 8,691,653 ձայն կամ մասնակիցների ձայների 100.0%
դեմ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
ձեռնպահ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
անվավեր 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

5. Հինգերորդ հարց կողմ 8,691,653 ձայն կամ մասնակիցների ձայների 100.0%
դեմ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
ձեռնպահ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
անվավեր 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%

6. Վեցերորդ հարցի քվեարկությունը կատարվել է գումարային /կումուլյատիվ/ քվեարկության սկզբունքով, համաձայն որի թեկնածուները ստացել են հետևյալ ձայների քանակը.

1. Սարիբեկ Սուքիասյան՝ ինժեներ տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու	8,694,234 ձայն
2. Արամ Խաչատրյան՝ ինժեներ-տնտեսագետ	8,683,188 ձայն
3. Ռուբեն Հայրապետյան՝ տնտեսագետ-հաշվապահ	8,683,128 ձայն
4. Լուիզա Պետրոսյան՝ տնտեսագետ-մաթեմատիկոս	8,683,078 ձայն
5. Պեր Ֆիշեր՝ տնտեսագետ	8,682,838 ձայն
6. Հրանտ Սուվարյան՝ տնտեսագետ	8,682,868 ձայն

Համաձայն կանոնադրությամբ սահմանված մեխանիզմի, փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը սահմանված ձևի առաջարկներ են ներկայացրել իրենց ներկայացուցչի առաջադրման և բանկի Խորհրդի կազմում ընդգրկման վերաբերյալ:

Ստորև բերվում է նշված առաջարկների ամփոփման տեղեկանքը.

ՏԵՂԵԿԱՆՔ

№	Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի առաջադրվող թեկնածուի անունը	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի քանակը	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի ձայների քանակը
1.	Մելիքյան Արամ	441*	550,873*
2.	Հարությունյան Արտաշես	4	2,685
3.	Գևորգյան Վանիկ	1	250
	*** ներառյալ կետ 5**		
№	Այլ առաջարկ	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի քանակը	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի ձայների քանակը
4.	Առաջարկ չունեմ	27	1,638
5.	Պաշտպանում եմ առավելագույն ձայն ստացած անձին	131	20,413
6.	Ոչ լիարժեք ներկայացված առաջարկ /ոչ հստակ/	40	16,194
	ԸՆԴԱՄԵՆԸ	513	571,640

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել բանկի բաժնետերերի տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով, հետևյալ կազմով.

Նախագահ՝ Ա. Խաչատրյան

Անդամներ՝ Ա. Աղամյան, Ե. Ալեքսանյան

2. Հաստատել Բանկի Վարչության 2023թ. գործունեության հաշվետվությունը:

3. 2023թ. արդյունքներով վճարել շահաբաժիններ՝ մեկ բաժնետոմսին 40 ՀՀ դրամ հաշվարկով: Շահաբաժինների վճարումը սկսել ս.թ. հուլիսի 01-ից:

4. Հաստատել բանկի 2023թ. ֆինանսական հաշվետվությունները և բանկի 2023թ. գործունեությամբ ձևավորված շահույթից 445,583,360 ՀՀ դրամն ուղղել շահաբաժինների վճարմանը, գլխավոր պահուստին կատարել 238,000,000 ՀՀ դրամ մասհանում:

5. Բանկի աուդիտն իրականացնող անձ հաստատել սահմանված կարգով մրցույթում հաղթած «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերությունը:

6. Հաստատել բանկի Խորհուրդը բաղկացած 7 անդամներից /քվեարկությամբ ընտրված՝ 6 անդամ և առանց քվեարկության ներառված փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչ/, հետևյալ կազմով.

Սարիբեկ Սուքիասյան՝ ինժեներ տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու

Արամ Խաչատրյան ՝ ինժեներ-տնտեսագետ

Ռուբեն Հայրապետյան՝ տնտեսագետ-հաշվապահ

Լուիզա Պետրոսյան՝ տնտեսագետ-մաթեմատիկոս

Պեր Ֆիշեր՝ տնտեսագետ

Հրանտ Սուվարյան՝ տնտեսագետ

Արամ Մելիքյան՝ տնտեսագետ, փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչ

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողով.

նախագահ՝ Ա. Խաչատրյան

անդամներ՝ Ա. Աղամյան

Ե. Ալեքսանյան